«ՀԱՅԱՆՏԱՌ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Տնօրեն
«АРМЛЕС»
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
Директор
«HAYANTAR»
STATE NON COMMERCIAL ORGANIZATION
Director

№ 11-10/267
«07» «08» 2024թ.

0011, ք. Երևան, Ա.Արմենակյան 129
0011, Армения, г. Ереван, А. Арменакяна 129
A. Armenakyan 129, Yerevan, 0011, Armenia
Էլ.փոստ՝/e-mail:/эл.почта:info@armforest.am
Հեռ.՝/tel:/тел: 010/65-37-16, 010/65-02-35

ՀՀ ֆինանսների նախարարության
գլխավոր քարտուղարի պարտականությունները
կատարող պարոն Ա. Եսայանին

Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանին
(անձ.՝ AU0225776, տրված՝ 07.04.2021 թ, 056 կողմից)
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Բերդ Նժդեհի փ., տուն44

ՈՐՈՇՈՒՄ
«ՀԱ-ԳՀԾՁԲ-2024/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՍՈՍ ԽՈՐԵՆԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ (ԱՆՁՆԱԳԻՐ՝ AU0225776, ՏՐՎԱԾ՝ 07.04.2021 Թ, 056-Ի ԿՈՂՄԻՑ) ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի կարիքների համար աշխատակիցներին այլ աշխատանքային վայր տեղափոխելու ծառայությունների մատուցման ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱ-ԳՀԾՁԲ-2024/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել թվով 2 (երկու) մասնակից, այդ թվում՝ Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժնների մասով (հայտը կցվում է):

2024 թվականի հունիսի 3-ի թիվ 2 արձանագրությամբ 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը (արձանագրության պատճենը կցվում է):

2024 թվականի հունիսի 17-ին Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանի հետ կնքվել է N«ՀԱ-ԳՀԾՁԲ-2024/16-2» ծածկագրով պայմանագիրը (պատճենը կցվում է) և 2024 թվականի հունիսի 24-ին N1 Համաձայանգիրը:

Ծառայությունների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել համաձայանգիրը կնքելուց հետո մինչև 2024 թվականի նոյեմբերի 25-ը:

Համաձայն պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի 2024 թվականի հուլիսի 24-ի զեկուցագրի՝ Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը 2024 թվականի հուլիսի 18-ից գտնվում է ՌԴ-ում և չի մատուցել վերոնշյալ ծառայությունը:

2024 թվականի հուլիսի 30-ին Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանին պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցվել է փոստային առաքման և էլեկտրոնային փոստի միջոցով (ծանուցումների, փոստային կտրոնի պատճենները կցվում են):

Միաժամանակ, ծանուցմամբ Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանին առաջարկվել է մինչև 2024 թվականի օգոստոսի 6-ը ներառյալ վճարել տույժերը, որակավորման և պայմանագրի ապահովումները և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի գնումների բաժին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում չներառելու պայմանով: Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը՝ լինելով պատշաճ ծանուցված չի ներկայացրել կտրոնները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները և հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում:

Ստորև ներկայացվում են անհրաժեշտ տեղեկությունները՝ համաձայն ձևաչափի

| Մասնակցի | | | | |
|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյան | անձ.՝ AU0225776, տրված՝ 07.04.2021 թ, 056 կողմից, ՀԾՀ 2902680341 | ՀՀ Տավուշի մարզ, ք. Բերդ Նժդեհի փ., տուն 44 | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | 07.08.2024թ. ՀԱ-ԳՀԾՁԲ-2024/16 |

Սույն որշման բնօրինակն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն, պատճենը՝ Ֆ/Ա Սոս Խորենի Ներսիսյանին :

Սույն որոշման կատարման վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

Հարգանքով՝

Սևակ Մարկոսյան

Գնումների բաժին
Մանե Խաչատրյան
010304507